Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ ԿԻՑ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ
12.12.2017թ. ժ. 14:00 -15:30

Մասնակցում էին.

Սուրեն Կարայան	ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարար, հասարակական խորհրդի նախագահ
Հովհաննես Ազիզյան	ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի տեղակալ
Լևոն Խալիկյան	Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի ղեկավար
Մեխակ Ապրեսյան	Զբոսաշրջության պետական կոմիտեի նախագահի առաջին տեղակալ
Արմեն Եգանյան	Ճյուղային տնտեսական քաղաքականության վարչության պետ
Հասարակական խորհրդի	**անդամ կազմակերպությունների ներկայացուցիչներ**
Էդուարդ Կիրակոսյան, նախագահի տեղակալ	Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միություն
Փայլակ Թադևոսյան, նախագահ	«Հարկ վճարողների պաշտպանություն» կազմակերպություն
Մերի Գրիգորյան, Ալիսա Ջամալյան	Տնտեսական հետազոտությունների և զարգացման աջակցության կենտրոն
Արմեն Սարգսյան	«Գործք» ընկերություն և իրավատեղեկատվական ամսագիր
Նարինե Մաիլյան	«Արազա» ԲՀԿ
Աշոտ Միրզոյան, նախագահ	Սպառողների աջակցման կենտրոն
Արայիկ Վարդանյան, աշխատակազմի ղեկավար	ՀՀ առևտրաարդյունաբերական պալատ
Նունե Մանուկյան, տնօրեն	«Արենի գինու փառատոն» հիմնադրամ
Վոլոդ Կիրակոսյան, տնօրեն	Հայաստանի հանքագործների և մետալուրգների միություն
Խաչատուր Սապոնջյան	

Աշոտ Բաղդասարյան, նախագահ	Հայաստանի դիզայներների միավորում
Համլետ Դանիելյան, նախագահ	Հայաստանի արդյունաբերության աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միություն
Աշոտ Խաչատրյան	Տնտեսական լրագրողների ակումբ
Կարինե Դավոյան, տնօրեն	Հայաստանի ներգնա տուրօպերատորների միություն
Հայկ Մաղաքյան	
Սեդա Պապյան, նախագահ	Սերտիֆիկացման մարմինների և փորձարկման լաբորատորիաների շահերի պաշտպանության միություն
Միեր Սանթոյան	«ՀԿ կենտրոն» կազմակերպություն/ դիտորդի կարգավիճակով

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարին կից հասարակական խորհրդի անդամ հետևյալ կազմակերպությունների ներկայացուցիչները չեն մասնակցել նիստին հարգելի պատճառներով.

«Ամերիկայի առևտրի պալատը Հայաստանում» միություն
«Հայաստանի համայնքների միություն»
«Բերք Ջեվելերի» ՍՊԸ
«Հայաստան-Ռուսաստան» առևտրաարդյունաբերական ասոցիացիա
Business for Business (b4b.am) տեղեկատվական-վերլուծական կենտրոն
«Կապիտալ Լոկուս» ընկերություն

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարար Սուրեն Կարայանը, ողջունելով նիստի մասնակիցներին՝ շնորհակալություն հայտնեց խորհրդի անդամներին նախարարության հետ համագործակցելու, երկրի տնտեսական խնդիրների լուծմանը մասնակից դառնալու իրենց ցանկության համար: Նա կարևորեց հասարակական կազմակերպությունների և մասնավոր կառույցների կարծիքը նախարարության նախաձեռնությունների վերաբերյալ և վստահեցրեց, որ իրենց առաջարկները և դիտողությունները հաշվի կառնվեն որոշումներ կայացնելու ժամանակ: Նախարարը համոզմունք հայտնեց, որ հասարակական խորհրդում համատեղ աշխատանքը կլինի արդյունավետ:

Ըստ նիստի <u>օրակարգի առաջին հարցի</u>, նախարարի առաջարկությամբ, հասարակական խորհրդի անդամները ներկայացրեցին իրենց ակնկալիքները համագործակցությունից և առաջարկություններ արեցին:

«Հարկ վճարողների պաշտպանություն» կազմակերպության նախագահ Փայլակ Թադևոսյանն առաջարկեց պետական մարմինների շրջանում օրենսդրական նախագծերի քննարկումներին ներգրավել հասարակական կազմակերպություններից մեկական ներկայացուցչի, հիմնավորելով առաջարկն այն հանգամանքով, որ կառավարության ներկայացուցիչները միշտ չէ, որ կարող են խորքային պատկերացնել իրական վիճակը: Արդյունքում օրենքներն ընդունվում են թերություններով, իսկ հետո ենթարկվում բազմաթիվ փոփոխությունների:

Խորհրդի մյուս անդամները միակարծիք էին իրենց գործընկերոջ հետ՝ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներին ներգրավելու օրենսդրական նախագծերի քննարկումներին:

Հայաստանի ներգնա տուրոպերատորների միության տնօրեն Կարինե Դավոյանը, որպես պետություն-մասնավոր հատված համագործակցության դրական օրինակ, ներկայացրեց Հարկային օրենսգրքում իրենց կողմից առաջարկված փոփոխությունը՝ ներգնա զբոսաշրջության ոլորտում ավելացված արժեքի հարկի արտոնությունը վերականգնելու վերաբերյալ, ինչը հնարավոր եղավ իրականացնել նախարարության գործուն աջակցության շնորհիվ: Օգտվելով առիթից, Կարինե Դավոյանը Հայաստանի ներգնա տուրոպերատորների անունից շնորհակալություն հայտնեց նախարարության գործընկերներին և անձամբ նախարարին:

Նախարարի տեղակալ Հովհաննես Ազիզյանն <u>առաջարկեց</u> հասարակական խորհրդի անդամներին՝ ներկայացնել առաջարկություններ օրենսդրական նախագծերի քննարկումներին հասարակական կազմակերպությունների մասնակցության ձևաչափի վերաբերյալ և հաջորդ նիստի ժամանակ դրանցից ընտրել բոլորի կողմից ընդունելի տարբերակը:

<u>Օրակարգի երկրորդ հարցը</u>՝ 2017 թվականի ընթացքում նախարարության կողմից իրականացված աշխատանքը, հիմնական ձեռքբերումները և 2018 թվականի համար նախանշված գերակա խնդիրներն ու անելիքները համառոտ ներկայացրեց նախարարի տեղակալ **Հովհաննես Ազիզյանը:** Նա պատրաստակամություն հայտնեց քննարկել խորհրդի անդամների առաջարկությունները (փոխնախարարը խնդրեց մասնավորապես առաջարկներ ներկայացնել պետական աջակցման գործիքակազմի վերաբերյալ) և փորձագիտական գնահատականները, նշելով, որ համակարգված փոխգործակցությունը կտա դրական արդյունք:

<u>Օրակարգի երրորդ հարցի</u>՝ 2018 թվականին նախարարին կից հասարակական խորհրդի գործունեության ձևաչափի որոշման, հաջորդ նիստի օրակարգի հարցերի ձևակերպման վերաբերյալ նախարարի տեղակալ Հովհաննես Ազիզյանն առաջարկեց հավաքագրել բոլորի առաջարկությունները և հաջորդ նիստի օրակարգի համար ընտրել 5 հարց:

Սպառողների աջակցման կենտրոնի կողմից առաջարկված՝ սպառողների իրավունքների պաշտպանության վերաբերյալ **<u>օրակարգի լրացուցիչ հարցը</u>** ներկայացրեց կենտրոնի նախագահ Աշոտ Միրզոյանը: Նա նշեց, որ կենտրոնը սպառողներից ստանում է բազմաթիվ դիմում-բողոքներ անորակ ապրանքները առևտրի օբյեկտների կողմից հետ չվերցնելու վերաբերյալ և հավելեց, որ սպառողների իրավունքները պաշտպանելու միակ տարբերակը դատական ատյաններին դիմելն է, ինչը երկարատև պրոցես է, և սպառողները հաճախ չեն գնում դրան, միաժամանակ դժգոհելով պետության կողմից իրենց իրավունքները պաշտպանելու միջոցների բացակայությունից: Աշոտ Միրզոյանը կարծիք է հայտնել, որ տեսչական բարեփոխումների ընթացքում անհրաժեշտ էր հաշվի առնել սպառողների շահերի պաշտպանության հարցը և այս առումով որոշ լիազորություններ վերապահել Շուկայի վերահսկողության տեսչական մարմնին:

Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի ղեկավար Լևոն Խալիկյանը տեղեկացրեց, որ 2018 թվականին նախատեսվում են օրենսդրական փոփոխություններ, որոնցում նախատեսվում են սպառողների շահերի պաշտպանության խնդիրները:

Առաջարկվեց նախագիծը տրամադրել Սպառողների աջակցման կենտրոնին և, ըստ ցանկության, խորհրդի այլ անդամներին՝ իրենց դիտողությունները և առաջարկությունները ներկայացնելու համար:

Հայաստանի համայնքների միության կողմից առաջարկված հյուրանոցային հարկի վերաբերյալ **օրակարգի լրացուցիչ հարցը** տեղափոխվեց հաջորդ նիստ՝ միության ներկայացուցչի բացակայության պատճառով:

Որոշվեց.

Հասարակական խորհրդի քարտուղարությանը.

- Մինչև 2018թ. հունվարի 15-ը նախարարության կողմից մշակվող օրենսդրական նախագծերն ուղարկել Խորհրդի անդամներին:

Հասարակական խորհրդի անդամներին.

Մինչև 2018թ. հունվարի 30-ը Խորհրդի քարտուղարությանն առաջարկություններ ուղարկել.

- Օրենսդրական նախագծերի քննարկումներին հասարակական կազմակերպությունների մասնակցության ձևաչափի վերաբերյալ:
- Նախարարության կողմից մշակվող օրենսդրական նախագծերի վերաբերյալ:
- Հաջորդ նիստի օրակարգի վերաբերյալ:

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարին կից հասարակական խորհրդի հաջորդ նիստը հրավիրել 2018թ. փետրվարի երկրորդ կեսին:

ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

ՍՈՒՐԵՆ ԿԱՐԱՅԱՆ

Արձանագրությունը կազմվել է խորհրդի քարտուղարության՝ նախարարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի կողմից